մէկ մարդից ծնած երկու եղբայր՝ մէկը միւսին թշնամութիւն անէ, ատէ, հայհոյէ և բամբասէ նրա ցեղը. չէ որ նա ինքն իրան թշնամութիւն արած, հայհոյած և բամբասած կը լինի. Այդպէս է պատուիրում մեզ մեր սուրբ կրօնքը։

Բայց ես ժողովրդին ամենեին մեղաւոր չեմ համարում, որովհետև բոլոր վատ և սխալ գաղափարները մեր պատուելի հայր սուրբերն են խեղճ ժողովրդի, մանաւանդ ծերերի և կանանց մէջ տարածել, ասելով «Հայը ինչ բան է, ով է, հայի և կաթոլիկի մէջ մեծ սարեր կան, մանաւանդ, որ մեր սրբազան փափը անիծել է նոցա այս խօսքով, թէ «Լուսաւոր եկեղեցի չիք փրկութիւն» և սոցա նման յիմարացուցիչ խօսքեր։

Ես կամենում եմ մի երկու խօսք ասել այս տեղի հայ-կաթոլիկների անտէր և անպատուր ղեկավարի ներկայ և անցեալ անխիղճ գործունեան վրա։

Ութ կամ ինը տարի առաջ, ես էլ իբրև աշակերտ գնում էի այս գպրոցը ուսում սովորելու։ Ավասս իմ կորցրած ժամանակ...

Գպրոցը բաղկացած էր երկու դասատուներից, որոնցից մէկը հին և փոքր էր, որի մէջ սովորում էինք հայոց լեզուն, առաւօտեան 9-ը ժամից մինչև 1-ը այն էլ աւանց փոփոխութեան։ Հայոց լեզուի ուսուցիչը մի ծերունի տիրացու էր, որին կոչում էին տիրացու Նուռիկ, որը երբ ներս էր մտնում դասատուն, բոլոր աշակերտները էլ ոտի է դողի մէջ էինք ընկնում, որովհետև նա պահում էր ամեն ժամանակ իր վերարկուի տակ այն ահելի ճիպոտը, որի վրա մեր ձեռքերի, ոտների արիւնից տեղ տեղ կարմիր բծեր էին նշմարվում։ Այդ տիրացու Նուռիկը ամեն օր դասատուններս մտնելիս հրամայում էր մեզանից մի քանիսին գնա նրա տունը ջուր բերելու կամ թէ փայտ կոտրելու.... Իսկ մնացածներիս հրամայում էր կարդալ բարձր ձայնով, այնպէս որ ձայները մինչև հեռաւոր փողոցներ լսելի էին լինում։

Արդէն ընթերցողը հասկանում է թէ ինչ վիճակի մէջ էր այս գպրոցի հայոց լեզուն։ Իսկ ինչ որ վերաբերում է ռուսաց լեզուին, համեմատելով հայոց լեզուի հետ, շատ գերազանց էր, որովհետև դասատուն էլ, ուսուցիչ էլ նոր էին։ Մինչ այդ նոր դասատան մէջ սովորում էինք միայն հասարակ կարդալ և գրել, իսկ խօսել, ոչ մի բառ։

Ինչ է իցէ. չեմ ուզում երկար խօսել անցեալի վրա, միայն բերելով հայի առածը, թէ «Երկվայ մեռելը երկի թաղեցին, այսօրվայ մեռելի ճարը գտնենք»։ Հիմա մի քիչ էլ ներկայի վրա խօսենք։

Ներկայումս հայ-կաթոլիկները, ինչպէս երևում է, փոխանակ առաջ գնալու, փոխանակ ուսման սէրը ուսանելու յետ են գնում։

Անցեալ տարիներում, ինչպէս վերևը յիշեցի, գպրոցը բաղկացած էր երկու դասատուններից։ Նոր և հին։ Ներկայումս մնացել է մէկ դասատուն, այն էլ հնաչէնը։ Կարծեմ հայ կաթոլիկները ամենևին տեղիք չունէին յիշեալ գպրոցի նորաշէն և մեծ դասատունը յատկացնել տեղացին քահանայ հայր Ս. Շ.-ի բնակութեան համար։ Ասենք թէ ժողովուրդը կոյր էր, յիմար էր, չը նամեցաւ և դասատունը բնակարանի փոխեց, բայց մթնէ պատուելի հայրը չէ խղճում իր հոգևոր գպրոցի աշակերտներիս, որոնք պարապ պտտում են սրճկաների նման։ Ինչ անեն խեղճ տղայոց հայրերը։ ուսումնարանում տեղ չը կայ, որ տղայքը գնան և նստեն, իսկ եթէ տղաներին հայ-լուսաւորչականների ուսումնարանը տալու լինեն, պատուելին չի թողնի տալով. տղայքդ կրօնքից կը հեռանան։ Հաղիւ այս տարի ժողովրդի աչքը բացվեցաւ, ուզում են դարձեալ ձեռք բերել նորաշէն դասատունը, որ վաղուց տէր հոր կեցութեան համար բնակարան էր դարձել, բայց պատուելի հայրը չէ ուզում տեղափոխվել, ասելով. «Ինչ պէտք է երկու դասատուն. մեր ժողովուրդը քիչ է, մէկ դասատունով էլ ազատքը բաւականանում են, թող քիչ էլ նեղվածք լինեն»։

Թոյլ ունեմ, որ հայ-կաթոլիկները չեն խաբվի պատուելիի խօսքերից, կաշխատեն ձեռք բերել իրանց նորաշէն դասատունը, որովհետև այդ ժողովրդին է պատկանում, ոչ թէ պատուելուն։ Թոյլ ունեմ, որ այսուհետև կը վարձեն լաւ ուսուցիչներ, որ իրանց տղայքը կարողանան բարոյական կրթվել, գարգանալ և կանոնաւոր ուսում ստանալ, և ոչ թէ տիրացու Նուռիկի պէս միայն ապոթքներ սովորել։

Հայ-կաթոլիկ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Օգոստոսի 20

Սարանից քանի մի ժամանակ առաջ մեր լրագիրները տարածել էին լուր, իբր թէ հանգուցեալ Գարբրիէլ արքեպիսկոպոս Ալվազեանի թղթերն, ընդունելով Էջմիածնայ մաքսատեսութեան ձեռք՝ այրուել են։ Այս լուրը, ինչ ասել կուզէ, ամեն բարեմիտ հայի մեծ վիշտ պատճառեց, նախ որ՝ հայոց գրականութիւնը և ժամանակիցց պատմութիւնը զրկվել էին գեղեցկի նիւթերից և ազգասիրներից, և երկրորդ որ՝ մեր օրերումն գանվում են մարդիկ, որոնք իրանց անձնական կրքերը յագեցնելու համար, գործածում են այնպիսի հնարներ (առիթ-գաթէ), որոնք ներելի էին միայն միջնադարեան անգութ բարբարոսներին....

Այո, այդ վերոյշեալ լուրը, առանց բացառութեան, ամեն բարեմիտ հայի մեծ վիշտ պատճառեց։

Մեսոյս 15—19 գտնվելով Էջմիածնայ մէջ, ես հետաքրքրվեցայ տեղեկանալու արդեօք ճշմարիտ էր այդ սխրալի լուրը, թէ դա մի զլուգրական բադ էր, բայց թողած ով գիտէ ինչ խորամանկ նպատակով։ Էջմիածնայ մէջէ որքան և անձնիք կային (ամենքն էլ իսկ կաչառված չէին), գրեթէ ամենքին հարցուցի այդ մտացածին վշտալի անցքի մասին, և ամենն բերանից լսեցի որ նրանք «մինչև անգամ գրա նման բան լսած չենն, ուր մնար թէ՝ տեսած լինէին։ Դոյնը բան ասացին՝ ինքը Վեհափառը, սինոդի անդամներն անդամք, Վարքամ եպիսկոպոս Մանկուեանն, և այլք։

Գրանով ես ես չը բաւականացայ, ցանկացայ տեսնել հանգուցեալից մնացած թղթերն։ Գիտեմ թղթերը պահված էին վեհարանի սենեակներէն մէնի մէջ, որի դռները ամուր կղպանքներով կղպած էին և ուր ոչոք մուտք չունէր։ Ի պատիւ իմ (չը գիտեմ ինչով էի արժանացած) այդ փակվածդռները բացվեցան և ես աչքովս տեսայ այն թղթերի դէզը, որի կորստեան համար լալիս և ողբում են բարեմիտ հայերը։

Ես, նիրքդ սարդգրեալս, վկայում եմ, որ հանգուցեալ Գարբրիէլ արքեպիսկոպոս Ալվազեանի թղթերը, մինչև անգամ փոքրիկ, պատառոտած թղթի վրա գրած տողերը, յիշատակարանները (памятная книжка), տետրակներ, և այլն, անկորուստ կան ցուցակի անցուցած և համարի ձգած։

Այժմս տեսայ և ձեռքովս չոչափեցի։

1) Աստուածաբանութիւն տետրակներ, մի քանի բազմաթերթի, in folio տետրակներ, օտարի ձեռքով գրած, բայց հանգուցեալի գրչով ուղղած շատ տեղ։ 2) Հոգեբանութիւն. երեք հատ in quarto տետրակներ, թանգասայսում աշակերտի ձեռքով գրագրած։ 3) Սղագրութիւն (стенографія)։ 4) Լաթոգրաֆատարան, մէջաթ։ 5) Մի անգամ ժողովածու նամակների։ 6) Բանակների մեծ ժողովածու օրագրական և լրագրական յոդուածների։

Հասարակաց ուշադրութիւնը դարձնում եմ նամակների ժողովածուի վրա։ Այստեղ կային անհամար նամակներ զանազան անձինքէ գրած, որոց գրողք ոչ միայն կենդանի են, այլ և այս բոլորիս բնակում են Էջմիածնայ մէջ։ Նամակների բովանդակութիւնն է զանազան սմբատատանութիւնք այնպիսի անձանց դէմ, որոց գլխաւոր չատն էր անհեաստնել յիշեալ նամակները, բայց նոքա այդ բանը արած չենն.... Նշանակում է, որ այդ իզուր ամբաստանված անձինք առանել արդարամիտ և չիտակ են հանդիսացել, քան որքան ժողովուրդը կարծել է և կարծում է նրանց մասին։

Որովհետև ամեն բարեմիտ մարդ պարտաւոր է անեղծիւ գործ համարել այն զրպարտութիւնը, որի (հանգուցեալ Գարբրիէլ եպիսկոպոսի թղթերու այրելու) պատճառաւ բամբասվել են խեղճ Էջմիածինը և նրա մէջի բնակողքը։

Գրիգոր Ցամենցի և Ներսէս Խուդավերդեան եպիսկոպոսները իմ մտերիմ բարեկամներն են. նոցա խօսքին հաւատում եմ. Շատ կարելի է որ նրանք մի ուրիշ մարդումէ թաքցնէին. բայց առանել քան թէ կասկածելի է, որ նրանք ինձ չը յայտնէին գործի իսկութիւնը։ Գրիգոր և. Ցամենցիի վերջին խօսքերը այս էին՝ «Աստուծոմս երդնում եմ, որ Գաբրիէլ Ալվազեանի ոչ մի թղթիկը այրուած չէ Էջմիածնումն՝ նրանց սացված օրից ցայժմ»։

Ես ինձ համար սուրբ պարտք համարեցի մեր Էջմիածնայ, մեր վեհափառ կաթողիկոսի և Աթոռի միաբանների վրայից գէթ մի պատ մաքրելն, որով անխոնջ մարդիկ աշխատում են աղտեղել հայերուս այսպիսի ճշմարտամին, ուր հաշտութիւնն մրութիւնն և փոխադարձ ներողութիւնն ամենահարկաւոր պայմաններն էին։

Ամենախոնարհաբար խնդրում եմ մեր մեծապատիւ լրագրպետներին այս տողերս ամբողջապէս արտատպել իրանց հրատարակած լրագիրներումն, ի միաձուութիւն ժողովրդին և յարդարացումն բամբասված անմեղներին։

Աբելիկ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Օգոստոսի 1-ին

Ներքամապահութիւնը, որ գլխաւոր պարապմունքն է Ղարաբաղի չրջակայ բազմաթիւ գիւղերում, մանաւանդ Ագասի, Ադդաշի, Կեսկեշի և Ազգապատ գիւղերումն, չը նայելով որ առհասարակ ըստ մեծի մասին ժողովուրդը պարապում է այդ արհեստով, դեռ ես այնքան կատարեալ պարծված չէ, ինչքան հարկն է. չերամների պահելու տեղերը գլխաւորապես ծածկոցներ չունենալու առթիւ մեծ վնասներ կրում են յաճախ անձրևներից, ինչպէս ներկայ տարումս պատահեց. երկարատև և անընդհատ անձրևները գրեթէ բոլորովին փչացրին բերքերը։ Եթէ չերամապահութեան արհեստը այնքան լաւ կատարելագործված չէ այդ տեղերում, այդ հասկանալի է, որովհետև բացի այն, որ ժողովրդի մեծ մասը գալոց տարվան համար չէ պատրաստում իր բոժոժից լաւ սերմեր, այլ նա գնում է այդ Շուշուց (որ ստացվում են օտար տեղերից). Նրան յայտնի չէ այն բոլոր կանոնները, որոնք հարկաւոր են չերամապահութեան համար. այդ արհեստով ըստ մեծի մասամբ պարապում է գիւղացի թուրք ազգաբնակութիւնը։ Թարգմանվում այդ, մենք կը ցանկանք մի երկու պատկեր նկարագրել այն վաճառականների համար, որոնք պարապում են այդ առուտրով։ Այդ առուտրով պարապող մինչև 72 թիւր շատ քիչ մարդիկ գանվում էին Շուշում, բայց այդ միջոցից սկսած օրըստօրէ գրանց թիւր աւելանում է. Շուշում և իր չրջակայ գիւղերում 15-ի չափ մեծատաքէ գործարաններ կան։

Բոժոժագործը սկսվում է յունիս ամսի սկզբներում, և չարունակվում է մինչև 15 օր. բայց թէ ինչ անկարգութիւններ ասես որ չեն պատահում իւրաքանչիւր տարի այդ կողմերում բոժոժ առնող վաճառականների մէջ։

Անցեալ տարի վերջապէս ցանկանալով վերջ դնել այդ անկարգութիւնը, այդ առուտրով պարապող չուշեցի վաճառականներ հաւաքվելով միասին պայման կապեցին առանց գիւղը բարձրացնելուն գնել և իրենց դաշնակցութեան համամտութիւն. ամենն էլ ընդունեցին—երկու օրից յետ լսում ենք, որ դաշնակցութիւնը քանդուած է, ամեն մարդ ըստ իր կամաց սկսում է առնել։ Երևալով մի փոքր յաջողութեան նշաններ յետին գինեվաճառն էլ մի երկու հարիւր բուրլի ձեռքը դցելով, վաղ տուեց Ագասմ, մինը միւսին հակառակ վերջապէս գնելը բարձրացրին 10-ից մինչև 18-ը, բայց այդպիսի մի անհանգիստ ընթացքը չատերուն թանդ նստեց։

Զը նայելով անցեալ տարվայ սրած չատերի վնասներուն, նոյն անկարգութիւնը կրկնվեց և ներկայ տարումս Օրինակ, մի տեղ սկսում են առնել 7 բուրլով, և այնպէս էլ չարունակվում է, յանկարծ երեսում է մի որ և իցէ ազ՝ ծախող խաւեան և բարձրացնում է մինչև 9 և 10 բուրլի և մի 50 բուրլու առնելով, գինը բարձրացնելէն յետ, նա է քաշվում. գիւղացիք էլ սկսում են նրանից պակաս չը ծախել և մոռանալով որ գուցէ աւելի կը բարձրանայ սկսում են իրենք զօրացնել. ինչպիսի անի ուրեմն գործարարաւէրը, նա անպատճառ իր գործարանը չի կապի և ուստ նա սարկված է լինում ինչ գնով և իցէ առնել։

Մենք ներկայ էինք մի տեսարանի. Տող գիւղում Հայրուլենանցի գործակատարները սկսում են առնել նոյն գնով, այսինքն 7 բուրլի, յանկարծ նոյն տեղն է գալիս Ա. Մշուեանցց և չուզելով թողել որ նրանք առնել կարողանան, գինը բարձրացնում է մինչև 15 բուրլին։ Տեղացիք իրենց բերքերը բերում են նրա մօտ, սակայն կամք չունենալով առնելու տեղացիներից մի լաւ զրոս դու պատուիրեցեր անելուց յետոյ փախչում է։ Ահա մեր վաճառականի միակ իդեալը. Թող իմ հարևանի մի աչքը հանեն, ինձս չուտի, եթէ ես երկու աչքից էլ կը զրկվիմ։

* * *

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐԻՑ

—

Թիֆլիս, օգոստոսի 20

Ձեր լրագրի № 144-ի մէջ, չատ անգամվայ պէս քաղաքային վարչութեան ուշադրութիւն է դարձնում Ս. Կարապետի ձորում չինած սարդի գործարանից առաջացած զարշահոտութեան մասին, որ գործարանի մօտերքում բնակվողներին միշտ անհանգստութիւն է պատճառում և որ կարող է չատ հիւանդութիւններ առաջացնել։

Բայց, ահա այդ մի և նոյն տեսակ անհանգիստ դրութեան մէջ ենք և մենք։ Բեթղեհեմի թաղում բնակվողներս, նոյն եկեղեցու անմաքրութեան խոզովակի պատառվածքներից դուրս թափվող աղտոտութեան անտանելի և զզուելի հոտից։ Իսկ եթէ սովորականից աւելի սաստկանում է հոտը. Աստուած իմ, ինչ է լինում նորա չորքը բնակվողներիս դրութիւնը.... մարդը չչմում է և քիչ է մնում վայր ընկնի։

Գիշեալ թաղի կեցողները ամեն օր օթևնում են այն անձանց, որոնց սուրբ պարտականութիւնն է այդ և այդպիսի բաների վրա ուշադրութիւն դարձնեն. բայց չենն դարձնում։

Եւ մինչէ քաղաքային վարչութիւնը իր սովորութեան համեմատ պէտք է սարին տանուերկու ամիս չը լսելու ու չը տեսնելու դնէ թէ խեղճ ժողովրդեան արդարացի ձայնը, թէ տեղական լրագրութեան իրաւացի ակնարկութիւնները և միշտ անհոգ մնա իրան վրա ստանձնած պարտականութիւնները ճշգրտէն կատարելու մէջ։

Գուցէ չատերը չը հաւատան էլ իմ ասածին, բայց մինչէ ստուգելը դժուար է. փոքր Աստուծոյ, որ այդ թաղը քաղաքի մի ուրիշ հեռաւոր թաղերից չէ, իր գիրքով քաղաքին կենտրոնին մօտ է։ Թող վարչութեան ներկայացուցիչները ստուգեն և լսեն այնմ կարգադրեն, որպէս զի թէ թշուառ մարդիկ ազատվեն այն անտանելի դրութիւնից և թէ իրանց խիղճը հանգիստ լինի։

Ուրան լիլում եմ հենց այս մի և նոյն բանի վրա մի քանի անգամ տեղական լրագրութեան մէջ գրվել է և քաղաքային վարչութեան ուշադրութիւնը հրաւիրվել, բայց ցաւոք սրտի պէտք է ասել, որ մինչև էլ անուշադրութեան է տրուել յիշեալ վարչութեան կողմից։ Եւ գուցէ հենց հիմա էլ գարձեալ բան սովորականին ուշադրութիւն դարձնող և կարգադրող չը լինի։ Բայց մենք երբ այդ այդպէս կը չարունակվի.

Լ. Մ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լանդոնից հնարկալութեամբ ստացանք „The Armenians judged by foreigners" (Օտարների դատողութիւններ հայերի մասին) վերնագրով մի տետրակ, որ հրատարակվել է, ինչպէս ինքն ուրգրկում է բացատրում՝ «Հայոց ազգային բնաւորութեան մասին սըր Վիլիքրիդ Լասենի կողմից համանդիսների ժողովի մէջ, յուլիսի 23-ին արած խաչատաւալ նկատողութիւնների առիթով»։—Վերնագիրը բաւականին պարզում է բովանդակութիւնը։ Բայց հարկաւոր ենք համարում ասելացնել, որ հեղինակը ոչ թէ իր խօսքերով է յայտնում ուրիշների կարծիքը մի ամբողջ հայեացքի մէջ նրանց ամփոփելով, այլ բաւականանում է զանազան անուանի հեղինակների գրվածներից բաւական վկայութիւններ բերելով։

—

«Новое Время» լրագիրը տպել է մի չատ հետաքրքիր ֆելիետոն երրորդ բաժնի վերջներում մասին։ Ցօդուածի վերջում ֆելիետոնիստը բերում է կոմս Լորիս-Մելիքովի մի խօսակցութիւն։ Կոմսը խօսում է իր գործունէութեան մասին, ասում է թէ ինքն կարող է գործ գործել միմիայն միւս ծառայողների մասնակցութեամբ և աւելացնում է. «Իսկ ինձ լսում էք և երևի մտածում էք՝ դու, խա, խորամանկ արմատ չկա ես.. Եթէ ես լինեի ձեր տեղը, և ձեզ այդքան քիչ ճանաչէի, ինչքան դուք ինձ, ես նոյնը կը մտածէի։ Դա չատ բնական է ռուս մարդու կողմից։ Թէև ես պէտք է խոստովանվիմ, որ կրթութիւնը, ծառայութիւնը և բոլոր թէ ներքինան և թէ բարոյական չարերը, բոլորը, մի խօսքով, արեցին ինձանից մի ռուս մարդ, բայց այնու ամենայնիւ ձեր աչքում ես հաեմ։ Բայց որովհետև ես ծագմամբ հայ եմ, եմ նոյն իսկ այդ պատճառով պարտաւոր եմ այդ պատոնի մէջ, որի վրա ինձ դրել է կայսրը, ապրի անել, քան թէ ռուս։ Ռուսին բաւական է այդքան անել,—նրան չնորհակալ կը լինեն, իսկ ինձ նոյն չնորհակալութեան արժանանալու համար՝ հարկաւոր է անել անհամեմատ աւելի չատ։ Այդ ես չատ լաւ գիտեմ և միշտ յիշում եմ։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Գերմանական պաշտօնական լրագիրներից մէկի մէջ տպված է հետևեալ յոդուածը Գամբեատայի Ներքուրի մէջ ասած Ֆամբեատայի Ճառի մասին, մինչև

Մենք չենք կամենում խօսել Ներքուրի մէջ ասած Գամբեատայի Ճառի մասին, մինչև